Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունվարի 8-ի N 26 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԼՈՒԾԱՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՑԱԾ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների լուծարումից հետո պետությանն անցած շարժական և անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) տնօրինման գործընթացը։

2. Լուծարման հանձնաժողովը վարչական ակտի հիման վրա գույքը հանձնում է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, եթե լուծարման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այլ բան նախատեսված չէ։

3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ գույքն այլ պետական կառավարչական հիմնարկին (այսուհետ՝ հիմնարկ) հանձնվելու դեպքում հիմնարկի ղեկավարը գույքը հիմնարկի հաշվեկշռում հաշվառելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն (այսուհետ՝ վարչություն) է ներկայացնում՝

1) տեղեկություններ գույքի մասին, այդ թվում՝ գույքի անվանումը, գտնվելու վայրը, գնահատված արժեքը, շարժական գույքի դեպքում՝ նաև գույքի քանակը և չափի միավորը, լուծարման ընթացքում գույքի վաճառքի նպատակով կազմակերպված վերջին աճուրդի մեկնարկային գինը և այլ տեղեկություններ.

2) առաջարկություններ գույքի հետագա տնօրինման վերաբերյալ։

4. Վարչությունը սույն կարգի 2-րդ կետով սահմանված գույքն ընդունելուց կամ սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկություններն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ գույքի մասնավորեցման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 25-ի «Պետական գույքի աճուրդով մասնավորեցման կարգը հաստատելու մասին» N 387 որոշմամբ սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է աճուրդ՝ գույքի մեկնարկային գինը սահմանելով լուծարման ընթացքում տվյալ գույքի վաճառքի նպատակով կազմակերպված վերջին աճուրդի մեկնարկային գնի 80 տոկոսի չափով (եթե լուծարման ընթացքում գույքը ներկայացվել է աճուրդի գույքային համալիրի կազմում՝ գույքի գնահատված արժեքի չափով), կամ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնում է առաջարկություն գույքի տնօրինման վերաբերյալ, եթե սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով առաջարկվում է գույքի տնօրինման առավել ընդունելի պայման։

5. Գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման նպատակով վարչությունն աճուրդի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մամուլում հրապարակում է գույքը դասական աճուրդով մասնավորեցնելու մասին հայտարարություն, որն այլ տեղեկություններից բացի պետք է պարունակի տեղեկություններ գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (աճուրդների) կազմակերպման օրվա մասին, որը չի կարող լինել ավելի շուտ, քան վերջին աճուրդի օրվան հաջորդող տասներորդ օրը։

6. Գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների անցկացման տևողությունը չի կարող գերազանցել 6 ամիսը, իսկ յուրաքանչյուր հերթական աճուրդի անցկացման ժամանակ մեկնարկային գնի իջեցման չափը չի կարող լինել վերջին աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսից ավելի։

7. Վարչությունը լուծարումից հետո պետությանն անցած գույքի պահպանման համար անհրաժեշտ ծախսերի վերաբերյալ յուրաքանչյուր տարի առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, որը

նշված ծախսերը համապատասխան տողով ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում:

8. Գույքի պահպանությունն իրականացնող կազմակերպության ընտրությունն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ